

***Խորհրդատվական կենտրոնի
շահառուներն են՝***

- Բազմաբնակարան շենքերի բնակարանատերերը
- Կառավարման մարմինները
- Ջերմամատակարարման ծառայություններ մատուցող կազմակերպությունները
- Տեղական ինքնակառավարման մարմինները

***Խորհրդատվական կենտրոնի
նպատակն է՝***

Աջակցել բազմաբնակարան շենքերի սեփականատերերին, կառավարման մարմիններին և համայնքներին նպաստելով բազմաբնակարան շենքերում ընդհանուր (բաժնային) գույքի առավել արդյունավետ կառավարմանը և կոմունալ ծառայությունների՝ մասնավորապես ջերմամատակարարման բարելավմանը:

***Խորհրդատվական կենտրոնի
խնդիրներն են՝***

Խրախուսել և աջակցել ջերմամատակարարման նախագծերի իրականացմանը՝ տրամադրելով խորհրդատվություն բազմաբնակարան շենքերի սեփականատերերին, կառավարման մարմիններին, համայնքներին, ծառայություններ մատուցողներին և մասնավոր ներդրողներին՝

- աջակցություն ջերմամատակարարման նախագծերի ընտրությանը, նախագծերի և գործարար ծրագրերի մշակմանը
- բացահայտված խոչընդոտների վերացման նպատակով, աշխատանքային խորհրդակցությունների և քննարկումների կազմակերպում
- շահառուների կողմից առաջադրված խնդիրների լուծում՝ կենտրոնի անձնակազմի մասնագիտական ունակությունների, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այլ համագործակից կազմակերպությունների օգնությամբ
- բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների և ջերմամատակարարման ծառայություններ մատուցող կազմակերպությունների հարաբերություններում խոչընդոտների հաղթահարմանը ուղղված խորհրդատվության տրամադրում
- բազմաբնակարան շենքերի ջերմամատակարարման կազմակերպման և համակարգերի շահագործման վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացում
- խորհրդատվություն և աջակցություն բազմաբնակարան շենքերի կառավարման և պահպանման հարցերում
- աջակցություն բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ձևա-


վորմանը և նրանց կողմից ջերմամատակարարման ծառայությունների արդյունավետ կազմակերպմանը

- Երևանից դուրս գտնվող համատիրությունների և այլ շահառուների համար խորհրդատվության ապահովում և տեխնիկական աջակցություն՝ գործընկեր կազմակերպությունների, էլեկտրոնային փոստի և արտագնա ուսուցումների կազմակերպման միջոցով
- խորհրդատվական կենտրոնի նոր շահառուների բացահայտում:

Կենտրոնը աշխատելու է հետևյալ մոտեցումներով՝

- Հայաստանի տարածքում գրանցված բոլոր բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին անվճ
- ար տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում
- սոցիոլոգիական հետազոտությունների կազմակերպում՝ հարցումների, անհատական հարցազրույցների և հետազոտությունների իրականացում
- քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման ծրագրի վերաբերյալ իրազեկման բարձրացման սեմինարների կազմակերպում:

Մենք պատրաստ ենք խնդիրների հետաքրքրության շրջանակներում համագործակցել այլ կազմակերպությունների, պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, լրատվամիջոցների, մասնավոր ձեռներեցների, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ:



Խորհրդատվության և տեղեկատվության համար դիմել՝

Երևան, Թումանյան 8, 4-րդ հարկ,
սենյակներ՝ N 28, 29, 30
Հեռ.՝ 58 96 25

Էլ.-փոստ՝ naco@web.am

Կայք՝ <http://www.heating.nature-ic.am>

Կենտրոնը աշխատում է ամեն օր բացի (շաբաթ-կիրակի օրերից)
Աշխատանքային ժամերն են՝ 09:00-18:00
Ընդմիջում՝ 13:00-14:00



Armenia



Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին ջերմամատակարարման կազմակերպման

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսավորող՝

«Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք ջերմամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» UNDP/GEF 00035799 ծրագիր

Պատասխանատու իրականացնող՝

«Համատիրության սեփականատերերի ազգային ասոցիացիա» ՀԿ (NACO)

